## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՄ ՀՀ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

23.10.2013 19:49



2013թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը հյուրընկալեց Եվրոպական Միության ՀՀ-ում խորհրդատվական խմբի իրավապահ մարմինների խորհրդատու Սթիվեն Դեյվիդ Բրաունին և արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով օգնական Մարիամ Չախոյանին:
Կողմերը քննարկեցին իրավապահ մարմինների աշխատանքներին վերաբերող մի շարք հարցեր, մասնավորապես՝ քննիչների աշխատանքների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ նախապայմանները, ապացույցների շարքում ինքնախոստովանական ցուցմունքների աստիճանը և դրա պատճառները, այլ ապացույցների, օրինակ՝ ԴՆԹ թեստի կարևորությունը հանցագործությունների բացահայտման և մեղադրյալների անմեղության հաստատման հարցերում և այլն:

Հաջորդ նորությունը: ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })